ՏԻԳՐԱՆ Բ-Ի ՏԵՐՈՒԹՅՈՒՆԸ*

Դ. Խ. ՍԱՐԳՍՅԱՆ

Մ. թ. ա. I դարի առաջին տասնամյակները հայ ժողովրդի պատմության մեջ առանձնահատուկ տեղ են զրավում։ Դա այն ժամանակաշրջանն է, որի ընթացքում Հայաստանը, եղակի դեպք նրա պատմական կյանքում, բռնեց արտաքին նվաճումների ուղին և ստեղծեց մի մեծ աշխարհակալ տերություն, մեկն այն տերություններից, որոնք պարբերաբար առաջանում ու քայքայվում էին Առաջավոր Ասիայի տերիտորիայի վրա հին-արևելյան և հելլենիստական դարաշրջաններում։ Հայկական պետության տերիտորիան եռապատկվեց ի հաշիվ շրջակա մոտ ու հեռու երկրների, և Հայաստանը դարձավ ժամանակի հզորագույն քաղաքական ուժերից մեկը։

Այս է պատճառը, որ պատմագրության հայացքը միշտ էլ դամված է եղել հայ ժողովրդի պատմության այդ դրվագին ու ժամանակի ամենակարկառուն հայ գործչին՝ Տիգրան Բ-ին։ Հնում արդեն նա դարձել էր անտիկ (հունա-հռոմեական) պատմագրության սևեռուն ուշադրության առարկա և նրա ժամանակաշրջանի մասին այստեղ գտնում ենք անհամեմատ ավելի շատ տեղեկություններ, քան հայ ժողովրդի պատմության որևէ այլ փուլի մասին։ Չնայած դրան, սակայն, Տիգրան Բ-ի ժամանակաշրջանի ճշմարտացի լուսաբանությունը դժվարին խնդիր է, և դժվարությունն այս անգամ դալիս է ոչ թե աղբյուրների սղությունից, որը սովորական երևույթ է հին պատմության համար, այլ առկա ոչ սակավաթիվ աղբյուրների մեջ պատմական դեպքերը միակողմանի, անբարյացակամ, եթե չասենք՝ թշնամական դիրքերից արտացոլված լինելու փաստից։ Հայաստանի և Հռոմի միջև մղված պայքարի խնդրում անտիկ հեղինակների դերակշռող մասը հանդես է դալիս որպես հռոմեական ճամբարի ջատագով։

Սկզբնաղբյուրների այդ եվրոպակենտրոն դաղափարախոսությունը և հռոմեասիրական շահադրդռությունները ժառանդել է նաև Արևմուտքի բուրժուական պատմագրությունը, ի դեմս իր մի շարք մեծանուն ներկայացուցիչների՝ Թ. Մոմզենի, Թ. Ռեյնաքի[1] և ուրիշների։ Սրանց աշխատություններում Հայաստանի պատմության այս դրվագը լրիվ մեկուսացվում է հայ ժողովրդի պատմության ընդհանուր ֆոնից և դիտվում որպես զուտ պատահական հաջողությունների մի շրջան, իսկ Տիգրանի գործունեությունը՝ անջատվում նրան համակած հելլենիստական տրադիցիաներից և ներկայացվում որպես մի «բար-

---

* Տպագրելով ՀՍՍՌ ԳԱ Պատմության ինստիտուտի կողմից հրատարակության պատրաստվող «Հայ ժողովրդի պատմություն» բազմահատորյակի I հատորից մի հատված, «Հանդես»-ի խմբագրությունը հրավիրում է մասնագետներին իրենց կարծիքները հայտնել ներկայացվող մասի վերաբերյալ։

[1] Т. Моммзен, История Рима, III, М., 1941, էջ 42 և հտ.; Th. Reinach, Mithradates Eupator König von Pontos, Lpz., 1895.

բարոսի» քմահաճ ցանկությունների իրականացում։ Նույն այդ տենդենցները հստակորեն դրսևորվում են նաև արդի բուրժուական պատմագրության մեջ։

Սովետահայ պատմագրության մեջ անդրանիկ և առայժմ միակ փորձը՝ լուսաբանելու Տիգրան Բ-ի ժամանակաշրջանը, կատարել է Հ. Մանանդյանը։ Նորից ու հիմնովին ուսումնասիրելով սկզբնաղբյուրները և հատուկ ուշադրություն դարձնելով դրանցից փոքրասիական ծագում ու համեմատաբար չափազանց դիրքավորում ունեցողների վրա, նա տվել է ժամանակի նոր ու ճշմարտացի լուսաբանություն[3]։ Անկախ Հ. Մանանդյանից, նմանօրինակ մի փորձ է կատարել նաև ամերիկահայ պատմաբան Հրանտ Արմենը[4]։

Տիգրան Բ-ի գահակալությունը։ Մ. թ. ա. 95 թ. մահացավ Արտավազդ Ա թագավորը՝ Արտաշես Ա-ի որդին, որը հավանաբար անզավակ էր։ Թագաժառանգ Տիգրանը՝ Արտավազդի եղբոր և նախորդի՝ Տիգրան Ա թագավորի որդին ու Արտաշես Ա-ի թոռը, որպես պատանդ գտնվում էր պարթևների արքունիքում՝ վերջին հայ-պարթևական պատերազմի ժամանակից[5]։ Տիգրանը ծնվել է մոտավորապես 140 թ. մ. թ. ա. և 95 թ. պետք է արդեն 45 տարեկան հասունացած մարդ լիներ[6]։ Նրա կյանքի վերջին տասնամյակը անցել էր պարթևների արքունիքում և սրանք Տիգրանին պետք է իրենց մտերիմը ու, հետևաբար, հայկական գահի ցանկալի թեկնածու համարեին։ Այս է հավանական պատճառը, որ Միհրդատ Բ-ը արձակեց նրան ու միգուցե նաև օժանդակեց նրա գահակալմանը, պահանջելով և ստանալով միայն որպես փրկագին «Յոթանասուն հովիտներ» կոչված տեղանքը, որը գտնվում էր Հայաստանի արևելյան շրջաններում՝ մարական սահմանի մոտ[7]։ Տիգրանը թագադրվեց, Ապպիանոսի ասելով, այն տեղում, որտեղ նա հետագայում հիմնեց Տիգրանակերտ քաղաքը (App., Mithr., 67)։

Ինչ վիճակում էր գտնվում Հայաստանը այդ պահին։ Նրա տերիտորիալ կազմը, համեմատած Արտաշես Ա-ի ժամանակաշրջանի հետ, ըստ երևույթին, էական փոփոխություն չէր կրել, վերջին 50—60 տարիներն էլ համեմատաբար հանգիստ էին անցել։ Սակայն այդ արտաքին անշարժության տակ թաքնված էին երկրի սոցիալ-տնտեսական կյանքի զարգացման բազմաթիվ տեղաշարժեր, որոնք շուտով ստրկատիրական Հայաստանի համար պետք է հնարավորություն ստեղծեին դուրս գալու միջագգային լայն ասպարեզ և վարելու ներգործուն արտաքին քաղաքականություն։ Դրանք էին դեռևս IV—III դարերում ծայր առած և II դարում մեծ թափ ստացած՝ հողի մասնավոր սեփականության աճի, սրա հետ կապված մասնատիրական տնտեսությունների բազմացման, դասակարգային շերտավորման խորացման, արքայական իշխանության անմիջական նեցուկը կազմող ռազմա-ստրկատիրական ավագանու հզորացման, քաղաքային կյանքի վերելքի, տեղական և տարանցիկ առևտրի աշխու-

---

[2] Տե՛ս, օրինակ, A. Heuss, Romische Geschichte, Braunschweig, 1960, էջ 280, որտեղ Տիգրանի պետությունը անվանված է «բեմական տիրություն»։

[3] Հ. Մանանդյան, Տիգրան Երկրորդը և Հռոմը, Երևան, 1940։

[4] Հրանտ Փ. Արմեն, Մեծն Տիգրան, Կահիրե, 1957։

[5] Strab., XI, 14, 15. Just., XLII, 2.

[6] Luc., Macr., 16։ Ըստ Լուկիանոսի, Տիգրանը 85 տարի է ապրել. քանի որ նա մահացել է մ. թ. ա. 55 թ. մոտերքը, ապա ծննդյան թվականն է մ. թ. ա. 140-ը։

[7] Just. XXXVIII, 3. Strab., XI, 14, 15. «Յոթանասուն հովիտների» տեղադրման մասին տե՛ս J. Markwart, Sudarmenien und die Tigrisquellen nach den griechischen und arabischen Geographen, Wien, 1930, էջ 110։

ժացման և ընդհանրապես երկրի ստրկատիրական տնտեսության զարգացման պրոցեսները։ Ինչպես տնտեսական վերելք ապրող ամեն մի ստրկատիրական երկրի, այնպես էլ Հայաստանի իշխող դասակարգը ձգտում էր արտաքին ծավալման, նորանոր հողերի ու մարդկային դանգվածների նվաճման։

Արտաքին հանգամանքները ևս անբարենպաստ չէին այդ ձգտումների իրականացման համար։ Հարավային հիմնական դարավոր վտանգը՝ Սելևկյանները, լրիվ չեզոքացված էին պարթևներից կրած պարտությունների, ապա նաև իրենց իսկ ներդինաստիական պայքարի և կռիվների պատճառով։ Հյուսիսում գոյություն չուներ այնպիսի ուժ, որ կարողանար արդելք հանդիսանալ Հայաստանի ծավալմանը։ Ամենավտանգավոր ուժը, որի հետ հաշվի պետք է նստեր Հայաստանը, պարթևներն էին՝ իրենց աշխարհակալական ձգտումներով, սակայն այդ ձգտումների մեջ այժմ, Միհրդատ Բ-ի կառավարման վերջին շրջանում, որոշ տեղատվություն էր նկատվում։ Անշուշտ Տիգրանը սերտ կապեր պիտի ունեցած լիներ այդ թագավորի հետ, որոնք ծայր էին առել պարթևական արքունիքում իր պատանդ եղած ժամանակ։ Այդ մասին է վկայում, միանդամայն որոշակիորեն, այն հանդամանքը, որ Տիգրանի դուստր Ավտոման ամուսնացած էր Միհրդատ Բ-ի հետ[8]։ Հնարավոր է, որ այդ ամուսնությունը տեղի է ունեցել Տիգրանի դահակալման ժամանակ և հենց այդ կապակցությամբ՝ երկու պետությունների հարաբերությունները կայուն դարձնելու նպատակով։ Ինչևիցե, Տիգրանը պարթևների նկատմամբ սկզբնապես դրդուշավոր քաղաքականություն էր վարում և ամբողջ 7—8 տարի, մինչև Միհրդատ Բ-ի մահը, ոչ մի քայլ չարեց նրանց դեմ, թեև, չպետք է մոռանալ, «Յոթանասուն հովիտները» (իր փրկագինը) դտնվում էին պարթևների ձեռքում։

Ինչ վերաբերում է Հայաստանի արևմտյան սահմաններին, ապա այստեղ վիճակը առաջին հայացքից ավելի սուր էր. բուռն աճ էր ապրում Պոնտոսի թագավորությունը, որը հաջողությամբ իրականացնում էր ամբողջ Փոքր Ասիային, ինչպես նաև Սևծովյան առափնյա մյուս երկրներին, հատկապես Բոսպորի թագավորությանը տիրանալու իր ձգտումները։ Սակայն ապագան ցույց տվեց, որ Հայաստանի և Պոնտոսի շահերը չպետք է բախվեին, որ նրանք պետք է հանդես գային որպես դաշնակիցներ և ոչ՝ մրցակիցներ, պետք է միավորեին իրենց ջանքերը ժամանակի հզորագույն ուժին՝ հռոմեական ագրեսիային դիմագրավելու համար։ Առայժմ, դարասկզբին, Հռոմը հեռու էր Հայաստանի սահմաններից ու նրա կողմից սպառնացող վտանգը գեռ շատ մշուշապատ էր գծագրվում, եթե ընդհանրապես գծագրվում էր Հայաստանի առջև, մանավանդ որ ավանդաբար շարունակվում էր այն բարենպաստ մթնոլորտը, որը ստեղծվել էր մեկ դար առաջ, Սելևկյաններից, Հռոմի այդ թշնամիներից, Հայաստանի անջատվելու ու նրանց դեմ պայքարելու կապակցությամբ։

Արտաքին նվաճումները։ Հետագա իրադարձությունները թույլ են տալիս ենթադրելու, որ Տիգրանը դեռևս իշխանության գլուխ անցնելուց առաջ, պատանդ եղած ժամանակ, հղացել էր Հայաստանի ներքին ու արտաքին քաղաքականության ծավալուն մի ծրագիր, որն այժմ սկսեց իրագործվել։

---

[8] E. H. Minns, Parchments of the Parthian Period from Avroman in Kurdistan, „The Journal of Hellenic Studies", vol. XXXV, Part I, 1915, էջ 40—42. Տիգրանի դուստրը՝ Միհրդատ Բ-ի երեք կանանցից մեկն էր։ Նրա երկրորդ անունն էր Արիազատե։

[9] Տե՛ս Հրանտ Արմեն, Մեծն Տիգրան, էջ 34 և հտ.։

Նա սկսեց հենց այն կետից, որտեղ սայթաքել էր իր պապը՝ Արտաշես Ա-ը. դա Ծոփքի միացման խնդիրն էր, որով կիրականանար Մեծ Հայքի տերիտորիայի ամբողջացումը։ Ծոփքում իշխում էր Արտանեսը (Վարդա՞ն), Զարեհի շառավիղը։ Արդեն 94 թ. հայկական զորքը ներխուժեց Ծոփաց աշխարհը և առանց դժվարության դրավեց այն։ Զարեհյանների դինաստիայի իշխանությանը վերջ տրվեց, և երկիրը միացվեց Մեծ Հայքին (Strab., XI, 14, 15)։

Այս վճռական քայլը միանգամից դուրս բերեց Հայաստանը ժամանակի միջազգային հարաբերությունների ոլորտը։ Հարցն այն է, որ Ծոփքը վաղուց ի վեր քաղաքական կապերով կապված էր իր արևմտյան հարևան Կապադովկիայի հետ, որի ջանքերով էր հիմնականում պահպանում իր ինքնավարությունը։ Այժմ Կապադովկիան ճգնաժամի մեջ էր և գտնվում էր հարևան Պոնտոսի կողմից կլանման վտանգի ներքո։ Կապադովկիային հարվածելու առիթը չափազանց դայթակղեցուցիչ էր, մանավանդ որ Պոնտոսի թագավորը՝ Միհրդատ Զ Եվպատորը մեծ շահագրգռվածություն ցուցաբերեց Հայաստանի դինակցության հանդեպ։ Նա հատուկ դեսպան ուղարկեց Տիգրանի մոտ դաշինք կնքելու առաջարկով։

Դաշինքը կնքվեց ու ամրապնդվեց Տիգրանի ամուսնությամբ Միհրդատի դեռատի դստեր՝ Կլեոպատրայի հետ։ Կողմերը պայմանավորվեցին, որ Կապադովկիայի տերիտորիան կանցնի Պոնտոսի գերիշխանության տակ, իսկ այն ամենը, ինչ կարելի է տեղաշարժել՝ մարդիկ, անասուններ, հարստություն՝ կտնօրինի Հայաստանը։ Կողմերից յուրաքանչյուրը հետապնդում էր իր շահը, և այդ պատճառով հիշյալ պայմանը անխախտ մնաց հայերի՝ դեպի Կապադովկիա քանիցս կատարած արշավանքների ընթացքում։ Այդ երկիրը, այսպիսով, ստրկատիրական Հայաստանի համար դարձավ մարդկային գանգվածների մի շտեմարան, որից լրացվում էր ինչպես քաղաքային բնակչության, այնպես էլ ստրուկների՝ Հայաստանում նկատվող պակասը։

Պետք է ասել, որ հայ-պոնտական դաշինքը դեռ երկար ժամանակ կապված մնաց միայն Կապադովկիայի հանդեպ տարվող քաղաքականության հետ և հեռու էր հակահռոմեական լինելուց. դոնե այդպիսին էր Հայաստանի վերաբերմունքը հիշյալ դաշինքին։ Ճիշտ է, Հռոմն իր շահերն ուներ Կապադովկիայում, ինչպես և ընդհանրապես արևելյան Փոքր Ասիայում, և դդաստ քաղաքագետը պետք է մշտապես հիշեր այդ մասին, սակայն Կապադովկիան ասպատակելը դեռևս չէր նշանակում ելնել Հռոմի դեմ։

Առաջին արշավանքը դեպի Կապադովկիա հայկական զորքը կատարեց Ծոփքի միացման հաջորդ տարին՝ 93 թ.։ Արիոբարզանը՝ Կապադովկիայի թագավորը, փախավ Հռոմ։ Հռոմը հանձնարարեց Լուկիոս Կոռնելիոս Սուլլային, որն այդ ժամանակ հռոմեական նահանգ Լեռնային Կիլիկիայի վարչապետն էր, վերականգնել իրերի նախկին վիճակը, որը և կատարվեց 92 թ.[11]։ Սակայն արդեն հաջորդ՝ 91 թ. հայոց զորավարներ Միթրասը և Բագոասը նորից ասպատակեցին Կապադովկիան և Արիոբարզանը կրկին փախուստի դիմեց, թողնելով ասպարեզը դաշնակիցներին (App., Mithr., 10)։ Հռոմում սրան բողոքակից դարձավ Բյութանիայի Նիկոմեդես թագավորը, որին իր հայրենի դահից քշել էր Միհրդատ Պոնտացին։ Երկու տարի անց Հռոմին հաջողվեց առանց

[10] Just., XXXVIII, 3. Plut., Luc., 14.
[11] Just., նույն տեղում, Plut., Sulla, 5. App., Mithr., 57.

դենքի ուժի վերականգնել Նիկոմեդեսին և կրկին անգամ՝ Արիոբարզանին, իրենց երկրներում (App., Mithr., 11)։

Կապադովկիական այս անցուդարձը մեծ նշանակություն չուներ Հայաստանի համար. էականը Սոփքի միացումն էր, որն արդեն կատարված փաստ էր։ Այդ բոլոր տարիների ընթացքում Հայաստանում առավելապես զբաղված էին երկրի ներքին գործերով, վարչական ապարատի վերանորոգմամբ ու հատկապես զորքի վերակազմավորմամբ, առանց որի անհնարին կլինեին հետագայի նվաճումները։

Դրանց իրագործման ճանապարհին կանգնած էին առաջին հերթին պարթևները, որոնք տիրել էին Ատրպատականին, Մարաստանին ու Հյուսիսային Միջագետքի երկրներին և, բացի այդ, իրենց ձեռքում էին պահում հայկական «Յոթանասուն հովիտները»։ Սակայն քանի դեռ կենդանի էր Տիգրանի գաշնակիցը և փեսան՝ ահեղ Միհրդատ Բ-ը, Տիգրանը խուսափում էր բախումներից։ Վիճակը փոխվեց 87 թ., երբ Միհրդատ Բ-ը մահացավ։ Հայկական զորքերը մտան «Յոթանասուն հովիտները»։ Լուրջ դիմադրության չհանդիպելով, նրանք շարունակեցին իրենց առաջխաղացումը և ներխուժեցին Ատրոպատյան Մարաստանի հողերն ու կտրելով-անցնելով երկիրը, մտան բուն Մարաստան։ Հետապնդելով պարթևական զորքերին, նրանք հասան մինչև Էկբատան՝ պարթևական արքայից-արքայի նստավայրերից մեկը[12]։ Էկբատանի պաշարման ժամանակ հրի մատնվեց պարիսպներից դուրս գտնվող թագավորական գրադյակը՝ Ադրապանան։ Ահաբեկված պարթևական թագավորը՝ Գոտարզը շտապեց հաշտություն կնքել ու հրաժարվեց ոչ միայն «Յոթանասուն հովիտներից», այլև Ատրոպատյան Մարաստանի և Հյուսիսային Միջագետքի երկրների գերիշխանությունից[13]։

Տիգրանը ամրապնդեց ստեղծված իրավիճակը դինաստիական մի նոր ամուսնությամբ՝ իր դստերը կնության տվեց Ատրպատականի թագավոր Միհրդատին (Dio, XXXVI, 14)։

Հաջորդ ռազմարշավն ուղղված էր դեպի հարավ։ Այստեղ մեկ դար առաջ Հայաստանին էր միացվել Տմորիքը, այժմ հայկական բանակը նվաճեց նրա արևմտյան կողմում ընկած Կորդուքը (Գորդիենեն) և Տիգրիսի միջին հոսանքի շուրջը տեղավորված Ադիաբենեն՝ պատմական Ասորեստանը։ Տիգրիսն անցնելով, զորքերը դուրս եկան Հյուսիսային Միջագետքի արգավանդ դաշտերը և գրավեցին Միգդոնիան՝ Մծբին (Նիսիբին) մայրաքաղաքով և Օսորոյենեն՝ հուհա (Եդեսիա, Էդեսսա) կենտրոնով[14]։ Այսուհետև Եփրատն էր միայն, որ բաժանում էր Տիգրանի տերությունը Սելևկյանների ձեռքում պահպանված հողերից։

Սկսվեց արտաքին նվաճումների հաջորդ փուլը՝ պայքարը Սելևկյանների դեմ։ Վերջիններս արդեն իսպառ կորցրել էին իրենց երբեմնի հզորությունը, որի առջև դողում էր ամբողջ Արևելքը։ Հսկայական տերության աստիճանական ջլատման, Հռոմի և պարթևների հետ վարած պատերազմներում կրած պարտությունների, արևելյան սատրապությունների կորստյան, ներդինաս-

[12] Isid. Char., Geographi graeci minores, ed. C. Müller, I, 250.

[13] Strab., XI, 14, 15. Memn., 58, 2. Դաչինքի մասին խոսում է Հուստինոսը (XL, 1)։

[14] Strab., XI, 14, 15. XVI, 12, 4. Eutr., VI, 8. Plut., Luc., 14, 21. Dio, XXXVI, 6, 2.

տիական արյունոտ պայքարի հետ կապված՝ իշխողների սրընթաց փոփոխությունների հետևանքով, պետությունը կանգնած էր կործանման նախագոռանը[15]։ Կենտրոնական իշխանությունը ուժ չուներ այլևս ապահովելու երկրի քաղաքական ամբողջությունը, առևտրի անվտանգությունը, իշխող դասակարգի պահանջները, այն ամենը, ինչ ստիպում էր նրա շուրջը համախմբվել պետության կարևորագույն մասը՝ հելլենիստական քաղաքները։ Իշխող դասակարգը մտածում էր նոր տիրոջ մասին։ Հուստինոսը պատմում է. «Եղբայրների փոխադարձ ատելությունը, ապա և նրանց որդիներին ժառանգաբար անցած թշնամությունը անընդհատ պատերազմներ ծնեցին, որոնք ծայրահեղ նվաստության հասցրին Ասորիքը ու նրա թագավորներին. ի վերջո ժողովուրդը դիմեց օտարի օգնությանը և սկսեց փնտրել օտարերկրացի թագավոր։ Ոմանք կարծում էին, որ պետք է հրավիրել Միհրդատ Պոնտացուն, մյուսները՝ Եգիպտոսի Պտղեմայոսին։ Սակայն իրերի բերմամբ Միհրդատը պատերազմների մեջ էր հռոմեացիների դեմ, իսկ Պտղեմայոսը Ասորիքի մշտական թշնամին է եղել։ Այսպիսով, բոլորը համաձայնության եկան Հայաստանի թագավոր Տիգրանի շուրջը, որը սեփական ռազմական ուժ ունենալուց բացի, պարթևների թագավորության դաշնակիցն էր ու Միհրդատի խնամին։ Եվ այսպես, հրավիրված լինելով Ասորիքի գահին բազմելու, նա 17 տարվա ընթացքում կառավարում էր ամենայն անդորրությամբ. չէր խանգարում պատերազմներով ուրիշների հանդիստը և ոչ ոք նրան չէր անհանգստացնում, այնպես որ պատերազմելու անհրաժեշտություն չկար»[16]։

Սակայն ինչպես երևում է այլ վկայություններից, Սելևկյանների տերության նվաճումը այդչափ դյուրին չէր եղել[17]։ Թեև այդ միջոցին, 83 թ., Սելևկյան թագավոր չկար (երկու եղբայր ու ախոյան թագավորները՝ Անտիոքոս Ժ Փիլադելփոսը և Փիլիպպոս Ա Փիլադելփոսը մահացել էին նախորդ տարին), բայց կար հավակնորդ՝ Անտիոքոս Ժ Եվսեբոսի կինը՝ Սելենե թագուհին, ի դեմս իր մանկահասակ որդու[18]։ Եթե գոյություն ունեցող կուսակցություններից մեկը հրավիրել էր Տիգրանին, ապա մյուսները պետք է որ զիմադրեին[19]։ Այսպես թե այնպես, Տիգրանը 83 թ. նստեց Անտիոքում Սելևկյանների գահին։ Հայկական բանակը շարունակեց առաջխաղացումը Միջերկրականի ափով և մտավ Փյունիկիա[20], հասնելով այդպիսով մինչև Եգիպտոսին սահմանակից Պտղեմայիս քաղաքը (Jos. Fl., A. J., XIII, 16, 4), ուր պատսպարված էր Սելենե թագուհին։ Այն ժամանակ, սակայն, չհաջողվեց նվաճել քաղաքը. այդ տեղի ունեցավ ավելի ուշ՝ 70 թ.՝ հայ-հռոմեական պատերազմի նախօրեին։

---

[15] Վերջին Սելևկյանների պատմությունը տե՛ս A. R. Bellinger, The End of the Seleucids, „Transactions of Connecticut Academy of Arts and Sciences", vol. 38, June 1949, էջ 51—102։

[16] Just., XL, 1. Ըստ Ապպիանոսի՝ Տիգրանի իշխանությունը Ասորիքում տևել է ընդամենը 14 տարի՝ 83-ից մինչև 69 թ.։ Սա ավելի ստույգ է։ Հուստինոսի մոտ հավանարար հաշիվը հասնում է մինչև 66 թ.՝ Տիգրանի և Պոմպեոսի միջև կնքված պայմանագրի ժամանակը։

[17] Հմմտ. App., Syr., 48. Plut., Luc., 14. Strab., XI, 14, 15. Trogus, prol. XL.

[18] A. R. Bellinger, նշ. աշխ., էջ 78—80։

[19] Տե՛ս Հ. Մանանդյան, Տիգրան Բ և Հռոմը, էջ 51։

[20] Strab., XIV, 4, 2. Liv., per., 101, էջ 80, 23—24։

Առափնյա Ասորիքում հայկական իշխանությունից դուրս մնաց միայն Սելևկիա խոշոր նավահանգիստը (Strab., XVI, 2, 8. Eutrop., VI, 14, 2)։ Ասորիքի ցամաքային մասի՝ Կելեսիրիայի նվաճման մասին հստակ տեղեկություններ չկան, սակայն նրա մասնակի գրավումը հավանական է. հայտնի են Տիգրանի Լամասկոսում հատած դրամները[21]։

Հաջորդ քայլը Դաշտային Կիլիկիայի նվաճումն էր[22], որով նորաստեղծ հայկական տերությունը դարձավ հռոմեական հանրապետության անմիջական հարևան. վերջինս հաստատվել էր Սելևկյան պետությունից նվաճված Լեռնային Կիլիկիայում։

Վերջապես Կոմագենեի նվաճմամբ Տիգրանը ավարտեց իր հսկայական երթը Առաջավոր Ասիայի երկրների վրայով և հարավ-արևմուտքից դուրս եկավ Ծոփքի ու Մեծ Հայքի սահմանները։

Նորաստեղծ տերությունը և նրա բնույթը։ Ստեղծված տերությունը ընդգրկում էր Առաջավոր Ասիայի մի նշանակալից մասը, այն տարածված էր Միջերկրական ծովից ու Եգիպտոսից մինչև Կասպիականը և Կուր գետից մինչև Միջագետք։ Ինչպես ամեն մի հզոր պետություն, նա իր ազդեցության ոլորտի մեջ առավ հարևան ավելի թույլ երկրները. դրանցից էին Վիրքը և Աղվանքը հյուսիսում, բազմաթիվ արաբական ցեղերը՝ հարավում։ Տիգրանի անունը հանդես է գալիս անդամ հեռավոր Բաբելոնիայում, մի սեպագիր վավերագրի մեջ[23]։ Տերության մեջ խոսում էին 15-ից ավելի լեզուներով։

Նորաստեղծ տերությունը տիպիկ հելլենիստական պետություն էր, հար և նման նրան նախորդող՝ Սելևկյանների ու Ալեքսանդր Մակեդոնացու տերություններին, որոնք իրենց հերթին նախատիպ ունեին ի դեմս Աքեմենյան, Նոր-Բաբելոնյան, Մարական ու Ասորեստանյան պետությունների։ Սրանք բոլորը, ինչպես և Տիգրանի պետությունը, տնտեսական ու էթնիկական կապերով չամրապնդված ռազմաքաղաքական միավորումներ էին, բազմազգ ու զարգացման ամենատարբեր մակարդակի վրա գտնվող տարրերից կազմված։

Նվաճված երկրներից կարևորագույնը և տնտեսության ու մշակույթի տեսակետից ամենից զարգացածը Ասորիքն էր։ Սա այն երկիրն էր, որ կազմում էր Սելևկյանների երբեմնի ընդարձակ տերության կորիզը։ Այն արժանացել էր այդ դիրքին թե՛ իր բնական առանձնահատուկ բարենպաստ պայմանների ու բերրիության և թե՛ ռազմական ու առևտրական դիրքի հարմարության պատճառով։ Ասորիքի կենտրոնական մասն էր կազմում այսպես կոչված Սելևկիսը, որի մեջ մտնում էին, իրենց լայնատարած հողային տերիտորիաներով հանդերձ, Սելևկյանների գլխավոր ռազմական կենտրոն Ապամեյա քաղաքը, նրանց կարևորագույն նավահանգիստները՝ Լաոդիկեյան և Սելևկիան և, վերջապես, աշխարհահռչակ Անտիոքը՝ Սելևկյանների մայրաքաղաքը։ Այդ քաղաքը դարձավ նորաստեղծ հայկական տերության հարավային մայրաքաղաք։ Արտաշատը մնացել էր հեռու հյուսիսում։

---

[21] Տիգրանի կողմից Ասորիքի նվաճման մասին մանրամասն տե՛ս A. Kuhn, Beitrage zur Geschichte der Seleukiden vom Tode Antiochos VII Sideies bis anf Antiochos XIII Asiaticos (129—64 v. Chr.), Altkirch, 1891, էջ 39—43։

[22] App., Syr., 48. Plut., Luc., 21. Pomp., 28. Dio, XXXVI, 37, 6.

[23] W. Belck, Aus der Berichten uber die Armenische Expedition. 9. Majafarkin. und Tigranokerta, „Zeitschrift für Ethnologie", 1899, էջ 27։

Անտիոքը հիմնադրել էր Սելևկոս Ա-ը մ. թ. ա. 300 թ. և անվանել այն իր հոր անունով։ Սելևկոսը վերաբնակեցրել էր այստեղ Անտիգոնիա քաղաքի բնակիչներին և բնակիչներ տեղափոխել Փոքր Ասիայի և Արշիպելագոսի հունական քաղաքներից։ Այդ ժամանակ կառուցվել է քաղաքի հետագայի չորս թաղամասերից միայն առաջինը։ Թաղամասերից չորրորդը կառուցվել է միայն Անտիոքոս Դ Էպիփանեսի ժամանակ (մ. թ. ա. 175—163 թթ.), իսկ մ. թ. ա. I դարում քաղաքն արդեն դուրս էր հորդել չորս թաղամասերի սահմաններից։ Անտիոքացի հռետոր Լիբանիոսը գրում է, որ Սելևկյանները «մտածում էին միայն մի բանի մասին՝ յուրաքանչյուրը ուզում էր թողնել քաղաքը ավելի աճած վիճակում» և «...ավելի հեշտ էր չափել ծովի ջուրը, քան փորձել բառերով նկարագրել, թե ինչ շենքերով է գեղեցկացրել քաղաքը յուրաքանչյուր թավորը» (Libanius, 124, 126)։ Հնարավոր է, որ Տիգրանը ևս, մեկ ու կես տասնամյակ իշխելով այստեղ, իր ներդրումն է արել քաղաքի կառուցման ասպարեզում։ Քաղաքը աչքի էր ընկնում իր կոմունալ հարմարություններով։ Հայտնի էր Անտիոքի ջրմուղը, որը սառն ու լավորակ ջուր էր հասցնում քաղաքի բոլոր տներին։ Ըստ Պլինիոսի տվյալների, քաղաքն ուներ 500 հազար բնակիչ ու մտնում էր հին աշխարհի խոշորագույն քաղաքների շարքը։ Անտիոքի արվարձանը՝ Դափնե գրոսավայրը, այնպիսի հռչակ էր վայելում իր շքեղությամբ, որ Անտիոքը հաճախ անվանում էին «Դափնեին կից Անտիոք»։ Անտիոքը, բացի իր քաղաքական նշանակությունից, արհեստագործական արտադրության մեծագույն կենտրոն էր, ինչպես և հելլենիստական մշակույթի օջախ և հին աշխարհում հայտնի էր իր թատերական ներկայացումներով։

Քաղաքի բարեկեցությունը և շքեղությունը խարսխված էին նրա բնակչության մի ստվար մասը կազմող ստրուկների ծանր աշխատանքի և չարքաշ առօրյայի վրա։ Ասորիքի տասնյակ մյուս մեծ ու փոքր քաղաքները ևս բարձր զարգացած ստրկատիրական պոլիսներ էին։ Ստրկատիրությունը լայն տարածում ուներ, սակայն, ոչ միայն քաղաքներում, այլև գյուղատնտեսության բնագավառում՝ Ասորիքի բերրի հողերի վրա սփռված արքունի, տաճարային և մասնատիրական տնտեսություններում։

Ավելի հարավ, Միջերկրականի արևելյան ափի երկայնքով մեկ ընկած էր Փյունիկիան, որը ևս Ասորիքի մի մասն էր կազմում։ Նրա ներկան գրեթե նույնքան փայլուն էր տնտեսական տեսակետից, որքան Հյուսիսային Ասորիքինը, իսկ անցյալը՝ էլ ավելի փարթամ։ Փյունիկյան քաղաքները՝ Տյուրոս, Սիդոն, Բերիտ, Արադ և այլն, որ մի ժամանակ ինքնուրույն քաղաք-պետություններ էին, մ. թ. ա. II հազարամյակում և I հազարամյակի սկզբներում ոչ միայն գերիշխում էին միջերկրածովյան ավազանում, այլև հաջող փորձեր էին անում դուրս գալ Հերակլյան սյուներից (Ջիբրալթար) այն կողմը։ Նրանք իրենց գաղութներն էին հիմնում Միջերկրականի ափերին։ Այս գաղութներից մեկն էր հռչակավոր Կարթագենը։ Մ. թ. ա. առաջին դարում փյունիկյան քաղաքները պահպանում էին իրենց նշանակությունը արևելքի և արևմուտքի տարանցիկ առևտրի մեջ։ Նրանք հանդիսանում էին նաև ստրկավաճառության խոշոր շուկաներ։

Ասորիքից հյուսիս-արևմուտք ընկած էր բազմաթիվ ոչ մեծ, բայց նշանավոր քաղաքներով հարուստ Դաշտային Կիլիկիան։ Կիլիկիայի քաղաքներն էին Տարսոնը, Սոլեն, Մոփսուեստիան, Անազարբան, Ադանան, Էպիփանիան, Մալլոսը և ուրիշները։ Սրանք մեծ մասամբ հին քաղաքներ էին՝ հելլենիստական

իշխողների ձեռքից պոլիսային կառուցվածք և իրավունքներ ստացած։ Այսպես, Սոլեն պոլիս էր դարձել Ալեքսանդր Մակեդոնացու օրոք, որը նախօրոք նրան պարսկական կողմնորոշման համար տուղանել էր 50 տաղանդ արծաթով (դումարը վկայում է քաղաքի հարստության մասին)։ Քաղաքն ուներ իր շքեղ թատրոնը։ Մայլոսը և Ադանան իրենց սեփական դրամներն են հատելիս եղել դեռևս Արեմենյանների տիրապետության ժամանակ։ Կիլիկյան ահա այս քաղաքների բնակչությունն էր, որ տեղահան եղավ և վերաբնակեցվեց Հայաստանում, տանելով իր հետ իր հելլենիստական քաղաքային կուլտուրան ու սովորույթները։

Որ բնակչության մի մասը տվեց Հայաստանին նաև քանիցս Տիգրանի հեծելազորի սմբակներով տրորված դժբախտ Կապադովկիան, հատկապես նրա մայրաքաղաք Մաժաքը (հետագայի Կեսարիան), հինավուրց քաղաք, որը ղեկավարվում էր ավանդական (իբրև թե մ. թ. ա. VI դարում ապրած կիպրացի օրենսդիր Քարոնդասի հանձնարարած) օրենքներով։

Սելևկյաններից նվաճած երկրների վրա վարչապետ նշանակվեց Տիգրանի մերձավորներից Մաղադատեսը (Բադարատը), որի նստավայրը դարձավ Անտիոքը։

Հայաստանի հարավային սահմանին էին հարում Օսրոյենեն՝ Եդեսիա (Ուռհա) մայրաքաղաքով և Միդդոնիան՝ Մծբին (Նիսիբին) կենտրոնով, որոնք Հյուսիսային Միջագետքի ամենաբարեբեր երկրներն էին։ Իր ժամանակ մակեդոնացի նվաճողները, ելնելով տեղանքի բարենպաստ պայմաններից, ցանկացել են այս վայրերը դարձնել երկրորդ հայրենիք, Ուռհան վերանվանելով Էդեսսա՝ Մակեդոնիայի թագավորանիստ քաղաքի անունով, հարևան երկրամասը՝ Միդդոնիա՝ մակեդոնական մի մարզի անունով։ Մծբինը վերանվանվել էր Անտիոք։ Այս երկրների և Հայաստանի միջև Տիգրանի օրոք հաստատված կապերը տնտեսական, հատկապես կուլտուրական, հակառակ հետագայի անբարենպաստ քաղաքական իրադարձություններին, դնալով ամրապնդվեցին. Ուռհան ու Մծբինը նշանակալից դեր էին խաղալու հայ ժողովրդի կյանքում։

Միջագետքի երկրների վրա վերակացու էր կարգված թագավորի Գուրաս (Կյուրոս) եղբայրը, որը նստում էր Մծբինում (Plut., Luc., 32)։ Մծբինը, ըստ Դիոն Կասիոսի և Պլուտարքոսի նկարագրության, ոչ միայն բազմամարդ ու հարուստ քաղաք էր, այլև ուժեղ ամրոց, շրջապատված երկու շարք հաստ ու բարձրաբերձ պարիսպներով և շուրջը փորված լայն խրամով (Plut., Luc., 32. Dio, XXXVI, 6)։ Գուրասի իշխանության ներքո էին դտնվում նաև Միջագետքի՝ Օսրոյենից և Միդդոնիայից հարավ ընկած տափաստանները, որոնք զբաղեցված էին արաբական քոչվորական ցեղերով։

Միդդոնիայից դեպի արևելք, Տիգրիսի ձախ ափին, ընկած էր Կորդուքը (Գորդիենեն), որը այդ ժամանակ արդեն կիսահայացած էր և հետագայում կազմեց պատմական Հայաստանի մի մասը։ Մի շարք անառիկ բերդերի առկայությունը առիթ էր տվել Ստրաբոնին ասելու, որ այս երկրի բնակիչները հմուտ շինարարներ են։ Տիգրանը լայնորեն օգտագործում էր նրանց շինարարական արվեստը։ Ստրաբոնը հիշատակում է այստեղ երեք բերդ-քաղաք՝ Սարիսա, Սատալկա և Պինակա (Strab., XVI, 1, 24)։ Կորդուքը հասարակական-տնտեսական զարդացման տեսակետից շատ ետ էր մնում վերը հիշատակված երկրներից։

Տիգրիսի հոսանքով ներքև ձգված էր Ագիաբենե երկիրը. այն ընդգրկում էր պատմական ըուն Ասորեստանի մեծ մասը և հատկապես նրա Նինվե մայրաքաղաքը։ Ադիաբենեի կենտրոնն էր Արբելա քաղաքը, որի անունով երկիրը երբեմն կոչվում էր Արբելիտիս (Plin., Pomp., 36)։ Այստեղ էր գտնվում Գավգամելա բնակավայրը, որի մոտ 331 թ. տեղի ունեցավ Ալեքսանդր Մակեդոնացու և Աքեմենյան Դարեհ Ը-ի վերջին վճռական ճակատամարտը, որն ավարտվեց պարսիկների ջախջախմամբ։

Վերջապես, այդ երկրներից արևելք ու մինչև Կասպից ծովը տարածվում էր Ատրոպատյան Մարաստանը, Գանձակ և Փրաասպա քաղաքներով։ Երկրի լայնատարած տերիտորիան համեմատաբար նոսր էր բնակեցված ու բնակչությունը գտնվում էր սոցիալական զարգացման դեռևս ցածր մակարդակի վրա։ Նա նոր էր թևակոխել ստրկատիրական հասարակարգը։

Ահա այն երկրները՝ արևմուտքից արևելք, որոնք առաջին գարի սկզբին ընկել էին Հայաստանի գերիշխանության տակ։ Ինչպես տեսնում ենք, գրանք շատ տարբեր էին թե՛ իրենց պատմական անցյալով և թե՛ զարգացման մակարդակով։

Տերության հիմքը կազմող Հայաստանը իր զարգացման աստիճանի տեսակետից ևս ամենևին միատարր չէր։ Խորունկ ձորերով ու բարձր լեռներով կտրտված Հայկական լեռնաշխարհի տարբեր մասերում ապրում էր հասարակական զարգացման ամենատարբեր մակարդակի բնակչություն, սկսած գրեթե նախնադարյան նախադասակարգային հասարակության փուլում գտնվող ցեղերից մինչև ստրկատիրական զարգացած հելլենիստական տիպի քաղաքները։

Ինչպես նշվեց, այս հսկայական ու բազմատարր միավորման բնույթը քաղաքական էր, ինչպես և նրա նախորդներ Սելևկյանների, Ալեքսանդրի և սրանց նախորդող միավորումների բնույթը։ Ուստի և այդ պետությունների բախտը մեծապես կախված էր քաղաքական իրադրությունից ու իրադարձություններից, ռազմական հաջողություններից ու անհաջողություններից։ Ալեքսանդրի պետությունը գոյություն ունեցավ տաս տարվանից քիչ ավելի միայն, մոտ հարյուրական տարի ապրեցին Մարական և Նոր-Բաբելոնյան պետությունները, ավելի երկար կյանք էր վիճակված Աքեմենյանների և Սելևկյանների պետություններին։ Տիգրանի պետությունը գոյություն ունեցավ շուրջ երկու տասնյակ տարի միայն։

Նման պետությունների առաջացումը օրինաչափ երևույթ էր Առաջավոր Ասիայում մ. թ. ա. I հազարամյակում, մասնավորապես նրա վերջին երրորդին, այսինքն պատմության հելլենիստական շրջանի ընթացքում։ Դրանց առաջացման անտեսական հիմնական պատճառն էր այդ ժամանակաշրջանի համար բնորոշ՝ ստրկատիրական հարաբերությունների ծավալումը, նրանց տարածումը նորանոր, պակաս չափով զարգացած, հաճախ նախադասակարգային հասարակությունների վրա և սրանց ներգրավումը ստրկատիրական աշխարհի ոլորտը։ Կարևորագույն ազդակ էր հանդիսանում հելլենիստական այդ պետությունների գոյության համար նաև օրըստօրև աճող տեղական և տարանցիկ առևտրի կարգավորման անհրաժեշտությունը, իսկ նման մի կարգավորում ի վիճակի էին ապահովել միայն այնպիսի պետությունները, որոնց վերահսկողության ներքո գտնվում էին լայնածավալ երկրներ, երկար առևտրական ուղիներ, բազմաթիվ առևտրական հանգույցներ։

Տիգրանի ներքին քաղաքականությունը: Չնայած տերության սահմանների ընդարձակմանը, չնայած այն հանգամանքին, որ այդ սահմանների մեջ էին մտել անտեսապես զարգացած այնպիսի երկրներ, ինչպիսիք էին Ասորիքը, Հյուսիսային Միջագետքը, Կիլիկիան, չնայած այդ երկրների քաղաքային կյանքի ու մշակույթի փայլին, նորաստեղծ տերության միջուկը և կենտրոնը մնում էր Հայաստանը։ Նվաճողներին չշլացրեց այդ փայլը և նրանք փորձ չարին փոխելու իրենց իշխանության աշխարհագրական և էթնիկական բազան, թերևս զգալով ստեղծված միավորման վաղանցուկ բնույթը։ Այս տեսակետը հետագայի քաղաքական արհավիրքների ժամանակ, ինչպես կհամոզվենք, իրեն լրիվ արդարացրեց։

Այդ քաղաքականության ամենավառ դրսևորումներից էր նվաճված երկրների բնակչության բռնի վերաբնակեցումը, որը հսկայական մասշտաբներով կատարվում էր Տիգրանի ժամանակ։ Հայաստանի սաճող ստրկատիրական տնտեսությունը, զարգացող քաղաքային կյանքը պահանջում էին մարդկային ուժի նորանոր զանգվածներ և այդ պահանջն էր, որ բավարարում էին վերաբնակեցումները։ Բացի արդեն հիշատակված կիլիկեցիներից ու կապադովկիացիներից, Հայաստան են բերվել նաև ասորիների, ադիաբենցիների, կորդվացիների և հրեաների հոծ զանգվածներ (Plut., Luc., 26, Φ. Բուզ., IV, ԾԱ). Մոտավոր հաշիվներով Տիգրանի օրոք Հայաստան է բերվել կես միլիոնից ոչ պակաս օտարերկրացի[24]։ Հետագայում կտեսնենք, թե ինչ նշանակություն ունեցավ այդ երևույթը Հայաստանի քաղաքների համար։ Իսկ գյուղատնտեսության մեջ հոդատեր-ստրկատերերի՝ ռազմական ու վարչական ապարատի ուռճացմանը համընթաց աճող ու զարգացող դասակարգը, որը միապետի հիմնական հենարաններից մեկն էր ու նրա հատուկ մտահոգության առարկան, նորանոր հողեր էր ստանում, ինչպես և գավթում, և իր դաստակերտները մշակելու համար ավելի ու ավելի լայն չափերով օգտագործում ստրկական աշխատանքը։

Նվաճված երկրներից գանձվում էին հարկեր ու տուրքեր, որոնք, դատելով Տիգրանի կուտակած հարստություններից[25], արքունիքի շքեղությունից, շինարարության թափից, ռազմական ծախսերի մեծությունից և այլն, չպետք է որ թեթև լինեին։ Հասկանալի է, որ հարկերի մի զգալի մասն էլ գանձվում էր Հայաստանի բնակչությունից։ Նվաճված երկրները պարտավոր էին ըստ պահանջի զորք տրամադրել Հայաստանին։ Նման պարտավորություններ ունեին նաև տերության մեջ չմտնող, բայց նրա ազդեցության ոլորտի մասը կազմող այնպիսի երկրներ, ինչպիսիք էին, օրինակ, Վիրքն ու Աղվանքը։ Տիգրանի զորքը, Պլուտարքոսի նկարագրությամբ, բացի հայերից, բաղկացած էր Ատրպատականի մարերից, ադիաբենցիներից, կորդվացիներից, արաբներից, մարդերից, իբերներից (վրացիներ), աղվաններից և այլ ժողովուրդների ներկայացուցիչներից (Plut., Luc., 26, 31)։

---

[24] Г. Х. Саркисян, Тигранакерт. Из истории древнеармянских городских общин. М., 1960, էջ 60։

[25] Միայն Տիգրանակերտից Լուկուլլոսը, քաղաքը գրավելուց հետո, տարել է 8 հազար տաղանդ արծաթ (Plut., Luc., 29), որ հավասար է մոտ 17 միլիոն ռուբլու ոսկով, իսկ Պոմպեոսին Տիգրանը վճարել է 6 հազար տաղանդ արծաթ ռազմատուգանք (Strab., XI, 14, 10. Plut., Pomp., 33. App., Mithr., 104), որ հավասար է մոտավորապես 12,5 միլիոն ռուբլու ոսկով։

Սակայն Տիգրանը իր գործունեության մեջ հանդես էր գալիս ոչ միայն որպես Մեծ Հայքի թագավոր, այլև որպես աշխարհակալ տերության միապետ, և նրա ձեռնարկումների մի ստվար մասն էլ կապված էր իր այդ դիրքի ամրապնդման ու տերության լայնածավալ տերիտորիաների կարգավորման հետ։

Իշխող թագավորական դինաստիայի պաշտամունքը, որը հելլենիստական աշխարհի խոշոր ու հզոր պետություններից ընդօրինակել էին հետգհետե կրեթե բոլոր թագավորները և որը Հայաստանում ընդունված էր արդեն Արտաշես Ա-ի ժամանակից, Տիգրանը վերանորոգեց։ Աստվածացված մեռյալ նախնիների կոգքին նա պաշտամունքի առարկա դարձրեց նաև իշխող թագավորի անձը՝ իր սեփական անձը՝ ընդունելով «աստված» մականունը[26]։

Մյուս քայլը, որին դիմեց Տիգրանը նույն նպատակներով, դա «արքայից արքա» տիտղոսի սեփականացումն էր։ Այդ տիտղոսը կարող էր կրել այնպիսի մի թագավոր, որի իշխանության ներքո կային այլ թագավորություններ[27]։ Տիդոանից առաջ այն պատկանում էր պարթև Արշակունիներին, սկսած Միհրդատ Ա-ից (171—138 թթ. մ. թ. ա.)[28]։ Թե ինչպիսի մեծ նշանակություն էր տալիս Տիգրանը այդ տիտղոսին, ցույց է տալիս նրա հիվանդագին վերաբերմունքը, երբ Լուկուլլոսի դրած նամակում նա իրեն սոսկ «արքա» անվանված տեսավ։ Տիգրանի արքունիքի փարթամությունը, որի մասին հատուկ հիշատակում են անտիկ պատմագիրները, նրա ստվար ու փայլուն շքախումբը արքային մշտապես ուղեկցող չորս թագավորներով հանդերձ, նրա շքեղագույն գգեստը այս ամենը ծառայում էր նույն նպատակին՝ բարձրացնել միապետի հեղինակությունը (Plut., Luc., 21)։

Նվաճված երկրների իրավավիճակը որոշելիս Տիգրանը, ըստ երևույթին առաջնորդվում էր ոչ թե որևէ սխեմայով, այլ կոնկրետ նպատակահարմարությամբ։ Այսպես, եթե Ատրպատականի և Կորդուքի թագավորները մնացին իրենց գահերին[29] և դեռ սրանցից առաջինը դարձավ հայոց թագավորի փեսան, ապա Միջագետքը և Ասորիքը վերածվեցին նահանգների, որոնք կառավարվում էին Տիգրանի կողմից կարգված վարչապետների միջոցով[30]։ Համապատասխան գործակալների ձեռքով սրանք տնօրինում էին իրենց հանձնարարված երկրների ռազմական ու տնտեսա-ֆինանսական գործերը։ Նվաճված երկրների վարչակարգի մեջ որևէ էական փոփոխություն չէր մտցվում, օգտագործվում էր գոյություն ունեցող կարգը ու վարչական ապարատը, մանավանդ զարգացած երկրներում։

Տերության ներքին կազմակերպման կարևորագույն միջոցառումներից մեկն էր առևտրի կարգավորման գործը. բնականաբար, այս հարցում իշխող դասը, անկախ իր ազգացեղային պատկանելությունից, մեծ սպասելիքներ ուներ։ Այն կարևոր էր ոչ միայն առևտրականների, այլև հոգատերերի, անաս-

---

[26] Pomp. Trog., prol. XLII. Տես Г. Х. Саркисян, Тигранакерт, էջ [illegible]

[27] App., Syr., 48. A. Gutschmid, Ueber de Beinamen der hellenistischen Könige, „Kleine Schriften", IV, Lpz., 1893, էջ 119։

[28] N. Debevoise, A Political History of Parthia, Chicago, 1938, էջ 51։

[29] Plut., Luc., 29. Կորդուքի թագավոր Զարբիենոսը հետագայում զավաճանության համար մահապատժի ենթարկվեց և երկրում հավանորեն կարգվեց արբունի վարչապետ։

[30] Այսպես, Միջագետքի վարչապետի՝ արքաեզրայր Դուբասի ռազմական օգնականն էր հույն Կալիմարոսը (տես Plut., Luc., 32. Dio, XXXVI, 6, 7).

նատերերի, արհեստավորական գործատների տերերի համար։ Նորաստեղծ տերության աշխարհագրական գիրքն այնպիսին էր, որ նա իր մեջ էր առել արևելքից-արևմուտք, դեպի միջերկրածովյան նավահանգիստները տանող հիմնական տարանցիկ ուղին, ինչպես և իրենք՝ նավահանգիստները։ Ճանապարհները դյուրին ու անվտանգ դարձնելու նպատակով և, իհարկե, մաքսերի գանձման գործը կարգավորելու ու պետության ձեռքում կենտրոնացնելու համար Միջագետքի տափաստանների արաբական քոչվորական որոշ ցեղեր բնակեցվեցին առևտրական ուղիների երկայնքով, հատկապես դրանց հանգուցակետերում, ինչպես, օրինակ, Եփրատի կարևոր գետանցում՝ Զեգմայում, և Կիլիկիան Ասորիքից բաժանող Ամանոս լեռների լեռնանցքում[31]։ Ծովային առևտրի կարգավորման գործում ևս Տիգրանը, չունենալով սեփական նավատորմիղ, հենվում էր նվաճված առափնյա բնակչության վրա։ Այսպես, ըստ Ստրաբոնի, նա «ծովը հանձնեց կիլիկեցիներին» (Strab., XIV, 5, 2)։

Տիգրանը լավ էր ըմբռնել քաղաքների, հատկապես Ասորիքի հարուստ և ազդեցիկ քաղաքների հսկայական նշանակությունը իր պետության համակարգում և ցուցաբերեց նրանց հանդեպ համապատասխան վերաբերմունք։ Նրա օրոք լրիվ պահպանվել է սելևկյան քաղաքների արտոնյալ վիճակը։ Դեռ ավելին։ Վերջին հետազոտություններից պարզվում է, որ այնպիսի քաղաքներ, ինչպիսիք էին Լաոդիկեյան և Բերիտը (Բեյրութ), հայկական տիրապետության ժամանակ է, որ ստացել են «ազատություն» կոչվող արտոնությունը, որը հելլենիստական շրջանում նշանակում էր ինքնավարության սովորականից ավելի լայն իրավունք, և որից նրանք զրկված են եղել Սելևկյանների ժամանակ։ Ի նշանավորումն այդ իրադարձության, որ տեղի է ունեցել մ. թ. ա. 81 թ., հիշյալ քաղաքները այդ տարեթիվը համարել են իրենց քաղաքային տոմարի սկիզբ և իրենց հատած (քաղաքային) դրամները թվագրել այդ տոմարով[32]։ Ապամեյա քաղաքը 76 թ. իրավունք է ստացել հատելու իր սեփական քաղաքային դրամները, որպիսի իրավունք Սելևկյանների ժամանակ նա չէր ունեցել[33]։ Այս և նմանօրինակ այլ փաստերը վերջնականապես հաստատում են Հուստինոսի վերևում մեջ բերված հաղորդումը, ըստ որի Տիգրանի իշխանության ժամանակաշրջանում Ասորիքի համար ստեղծված են եղել ապահով և բարենպաստ պայմաններ։

Տիգրանակերտի հիմնադրումը։ Քաղաքային կյանքի զարգացման մակարդակի տեսակետից Հայաստանը հետ էր մնում թե՛ Ասորիքից, թե՛ Փոքր Ասիայից։ Տերության սահմաններում բարձր զարգացած երկրների առկայությունը անխուսափելիորեն իր զորեղ ազդեցությունը պիտի գործեր Հայաստանի վրա բոլոր բնագավառներում՝ ինչպես սոցիալ-տնտեսական, այնպես էլ կուլտուրական. հատկապես ուժեղ էր այդ ազդեցությունը քաղաքային կյանքի զարգացման վրա։ Հելլենիստական քաղաքների նկատմամբ տարած քաղաքականության անմիջական շարունակությունն էր հանդիսանում Հայաստանի քաղաքների աճին ու բազմացմանը զարկ տալու ձգտումը։

---

[31] Plut., Luc., 21, Pomp., 32. Plin., Nat. hist., VI, 142. Я. А. Манандян, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен (V в. до н. э.—XV в. н. э.), изд. второе., Ереван, 1954, էջ 71։

[32] H. Seyrig, Antiquites syriennes, 42. Sur les ères de quelques villes de Syrie, „Syria", 1950, XXVII, էջ 26 և հտ., 38 և հտ.։

[33] Նույն տեղում, էջ 18 և հտ.։

Հայաստանի հին մայրաքաղաքը՝ Արտաշատը, մնացել էր տերության հյուսիսային ծայրամասում, նորը՝ Անտիոքը, հայկական բնաշխարհից դուրս էր գտնվում։ Անհրաժեշտ էր ստեղծել բուն Հայաստանում նոր մայրաքաղաք, որ միաժամանակ ընկած լիներ նաև ամբողջ տերության կենտրոնում։ Եվ ահա 80-ական թթ. վերջերին սկիզբ դրվեց այդպիսի մի քաղաքի շինարարության[34], Տիգրիսի վերին հոսանքի ձախակողմյան վտակներից մեկի հարմարավետ հովտում. Աղձնիք նահանգում։

Ապպիանոսի հաղորդմամբ՝ հենց այս տեղում է, որ Տիգրանը թաղադրվել է մ. թ. ա. 95 թ. (App., Mithr., 67)։ Կարելի է եզրակացնել, ուրեմն, որ տեղանքը աչքի է ընկել ոչ միայն հարմարությամբ, այլև կապված է եղել հայ ժողովրդի պատմական ինչ-որ ավանդությունների հետ։ Չպետք է մոռանալ, որ Աղձնիքը հայ ժողովրդի կազմավորման հնագույն օջախներից է։ Հնարավոր է, որ քաղաքի հիմնադրման պահին այստեղ գոյություն ունեցած լինի բնակավայր։

Հելլենիստական աշխարհում ընդունված են եղել նորաստեղծ քաղաքների բնակեցման որոշակի մեթոդներ, որոնք կիրառվել են Հայաստանում ևս դեռ Արտաշես Ա-ի ժամանակներից սկսած։ Տիգրանը կիրառում է նույն մեթոդները, բայց շատ ավելի լայն չափով։ Նոր հիմնադրված քաղաքում բնակեցվել են հայ ավաղանու շատ ներկայացուցիչներ (App., Mithr., 83)։ Բայց բնակչության նշանակալից մասը օտարերկրացիներ են եղել։ Օգտագործելով նվաճված երկրներում քաղաքային բնակչության առատությունը, Տիգրանը հարկադրական մի շարք վերաբնակեցումներ կատարեց Կիլիկիայից, Կապադովկիայից, Միջագետքից։ Այսպես, Կապադովկիայից վերաբնակեցվեց ամբողջ մայրաքաղաքը՝ Մաժաքը, Կիլիկիայից՝ Սոլի, Մալլոս, Ադանա, Էպիփանեյա և մի շարք այլ, ընդամենը 12, հելլենական քաղաքներ (Strab., XI, 14, 15) և այլն։

Իհարկե, այդ հսկայական դանգվածները չէին կարող տեղավորվել միայն Տիգրանակերտում։ Տիգրանակերտը անտիկ պատմագիրների երկերում նկարագրվում է որպես խոշոր, շքեղ կառուցված և հարուստ քաղաք, 25 մետր բարձրություն ունեցող պարիսպներով և պարիսպներից դուրս գտնվող արքայական պալատներով ու պարտեզներով (App., Mithr., 84)։ Սակայն այդ քաղաքի կյանքի առաջին փուլը, մինչև նրա ավերումը հռոմեացիների կողմից, տևեց միայն 10—15 տարի ու այդ ժամանակի ընթացքում քաղաքի բնակչու-

---

34 Թ. Ռեյնաքի կարծիքով (Mithradates Eupator, էջ 342) Տիգրանակերտը հիմնադրվել է 77 թ. մ. թ. ա.։ Ավելի հավանական է, որ այդ տեղի է ունեցել Կիլիկիայի նվաճումից անմիջապես հետո, 82 կամ 81 թթ.։

Տիգրանակերտի տեղադրության հարցը գիտնականների միջև իր ժամանակ մեծ վեճ էր առաջացրել։ Բոլոր աղբյուրները ցույց են տալիս այդ տեղը Տիգրիսի վերին հոսանքի շրջանում, բայց մի մասը տեղադրում է քաղաքը Տիգրիսից հյուսիս (Plin., Nat. hist. VI, 9. Eutrop., VI c. Ptol., V, 13, 22. Փավստոս Բուզանդ, IV, ԻԴ), մյուս մասը՝ հարավ (Strab., XI, 12, 4. Tac., Ann., XV, 5). Ներկայումս ընդհանուր համարում ունի Լեման-Հաուպտի կարծիքը, ըստ որի քաղաքը գտնվել է Տիգրիսից հյուսիս, Նրա ձախ վտակ Ֆարկին-սու գետի (անտիկ հեղինակների Նիկեփորիոն) ափին, Աղձնիքի Նփրկերտ գավառում (C. F. Lehmann-Haupt, Armenien einst und jetzt, I, Berlin, 1910 էջ 381 և հտ.)։ Տիգրանակերտի տեղադրությանը նվիրված գրականության տեսությունը տես K. Eckhardt, Die armenische Feldzüge des Lucullus, „Klio", IX, 1909, էջ 76—79։

թյունը չէր կարող տասնել մի քանի հարյուր հազարների, քանակ, որին հաղիվ-հազ հասել էին ժամանակի խոշորագույն քաղաքները՝ Անտիոքը, Ալեքսանդրիան, Հռոմը։ Երեի Տիգրանակերտի բնակչությունը 100 հազարից չէր անցնում։ Մնացյալ վերաբնակեցվածները տեղավորվում էին այլ վայրերում ու քաղաքներում։ Հայտնի է, որ գոյություն են ունեցել Տիգրանակերտ անունով, այսինքն՝ Տիգրանի օրոք հիմնադրված բաղարներ, բացի Աղձնիքից, նաև Արցախում և Ուտիքում, Տիգրանավան՝ Գողթնում (թերևս Պտղոմեոսի հիշատակած Տիգրանոամա քաղաքը—Ptol., V, 12, 10)։ Սրանք ևս պետք է ստացան լինեին վերաբնակեցվածների մի մասը։ Հայտնի է, որ վերջիններս տեղավորվում էին ոչ միայն բուն Հայաստանում, այլև Մարաստանում (Plut., Luc., 14), որտեղ Պտղոմեոսը իսկապես հիշատակում է Տիգրանա վայրը (Ptol., V, 2, 9), Ամանոսում[36], ուր գոյություն են ունեցել Տիգրանուկոմե անունով բնակավայրեր (Plin., Nat. hist., V, 81)։ Այս բոլորից բացի, հայկական աղբյուրներից հայտնի է, որ օտարերկրացիները տեղավորվել են մասամբ նաև հին հայկական քաղաքներում, որպիսիք են՝ Արտաշատը, Արմավիրը, Երվանդաշատը, Բագրևանդի Զարեհավանը, Աղիովիտի Զարիշատը և այլն[37]։

Հելլենիզմի ազդեցության ուժեղացումը։ Հելլենիստական երկրների բազմակողմանի ազդեցությունը Հայաստանի վրա զգացվում էր դեռևս մ. թ. ա. III դարում, իսկ II դարում այն հասավ նշանակալից չափերի։ Այնպես որ հարկ չկա նրա սկզբնավորումը կապել Տիգրանի ժամանակի հետ, ինչպես երբեմն արվում է։ Բայց մ. թ. ա. I դարի սկզբներին այդ ազդեցությունը անհամեմատ զորեղացավ շնորհիվ երկու նոր հանգամանքների։ Դրանցից առաջինն այն էր, որ Հայաստանը, թեկուզ և կարճ ժամանակով, դարձավ հելլենիստական մի պետության միջուկ, որով նրա կապերը հարևան զարգացած երկրների հետ մեծապես ուժեղացան։ Երկրորդ՝ Հայաստանը լցվեց այդ երկրների բնակչության հոծ մասսաներով, որոնք հանդես եկան որպես հելլենիզմի տրադիցիաների կենդանի կրողներ։ Նշված գործոններով ուժեղացած ազդեցության հորձանքը առաջին հերթին ողողեց, և դա բնական է, հայկական քաղաքները։ Եկվորները բերում էին իրենց հետ բազմադարյան քաղաքային կյանքի ընթացքում մշակված սոցիալական, քաղաքական ու կուլտուրական հիմնարկներ ու սովորույթներ։ Այս բոլորը իր դրոշմն էր դնում հայկական քաղաքների վրա։ Այդ կարգի երևույթ պետք է համարել, օրինակ, հույն դերասանների մասնակցությամբ թատրոնը Տիգրանակերտում (Plut., Luc., 29), որի ստեղծումը մասամբ կապված էր հելլենիստական քաղաքներից այստեղ տեղափոխված բնակիչների առկայության հետ։ Նման թատրոն ունեցել է Արտաշատը, ու չի բացառված, որ նրանից զուրկ չեն եղել նաև Հայաստանի այլ խոշոր քաղաքներ։ Կասկածից դուրս է այդ բնակչության ազդեցությունը քաղաքային կյանքի վրա նաև վարչական, կրոնական, առևտրական, արտադրական բնագավառներում։

Հայկական քաղաքների նորեկ բնակչությունը, ճիշտ է, շուտով բռնեց հայերի հետ մերվելու ուղին։ Բացառություն կազմեցին հրեաները, որոնց ներքաղաքային համայնքները պահպանվել էին Հայաստանում տակավին մ. թ.

---

[36] Plut., Pomp., 36. Plin., Nat. hist., VI, 142.

[37] Փավստոս Բուզանդ, IV, ԾԵ։ Մովսես Խորենացի, II, ԺԶ։

IV դարում (Փավստոս Բուզանդ, IV, ԾԵ)։ Բայց նորեկների ազդեցության արդյունքները որոշ չափով պահպանվեցին։

Հելլենիզմի ուժեղ ազդեցությանն էր ենթարկվել իշխող դասակարգի բարձրագույն շերտը, հատկապես՝ արքունիքը։ Սա բացառություն չէր, այլ օրենք հելլենիստական շրջանի Արևելքի համար, ուր հելլենիստական կուլտուրան ստացել էր մի տեսակ կոսմոպոլիտական բնույթ, դյուրությամբ ներթափանցում էր բոլոր երկրները և պատրաստակամորեն որդեգրվում հասարակության վերնախավի կողմից։ Հունական կուլտուրայի համար ուղի էր հարթում հունարեն լեզուն, առանց որի իր կյանքը չէր պատկերացնում իրեն հարգող ոչ մի թագավոր կամ իշխան։ Հունարենը դարձել էր միջազգային հարաբերությունների և առևտրի լեզու։

Տիգրանի արքունիքում ապրում ու գործում էին հույն փիլիսոփաներ, հռետորներ, պատմագիրներ, որոնցից մեզ հայտնի են աթենացի Ամփիկրատեսը (Plut., Luc., 22) և Մետրոդորոս Սկեպսիացին, «Հռոմեատյաց» մականվամբ[38]։ Վերջինս գրել է Տիգրանի և հավանաբար նաև նրա նախորդների պատմությունը, որը եթե հասած լիներ մեզ, անգնահատելի օգնություն ցույց կտար ժամանակի պատկերը վերարտադրելու գործում։ Դժբախտաբար նրանից ոչինչ չի պահպանվել։

Տիգրանի արքունիքից է դուրս եկել նրա որդի և հաջորդ Արտավազդ Բ-ը՝ հելլենական բարձր կրթության տեր մի անձնավորություն։

Իհարկե, անհամեմատ ավելի նվազ է եղել հելլենիստական կուլտուրայի ազդեցությունը բուն ժողովրդի վրա, եթե վերանալու լիներ քաղաքների բնակությունից։ Այս փաստին չի հակասում նաև այն հանգամանքը, որ հունարենը դարձել էր, հավանորեն՝ արամերենին զուգահեռ, մի տեսակ պետական լեզու. ժողովուրդը քիչ մասնակցություն ուներ պետական գործին, իսկ այն, ինչ անհրաժեշտ էր՝ նրան հասկացնողներ շատ կային, ի դեմս ծավալուն բյուրոկրատական ապարատի ներկայացուցիչների։ Ինչպես հարյուր տարի առաջ Արտաշես Ա-ի օրոք արամերեն անհասկանալի լեզվով գրված սահմանաքարերը իրենց տեսքով իսկ արգելում էին գյուղացուն անցնելու սեփականատիրական հողի սահմանը, այնպես էլ այժմ հունարենով գրված վավերագրի գոյության փաստը արդեն արդելում էր նրան խախտելու կնքված գործարքի պայմանները[39]։

Նույնը վերաբերում է կրոնին։ Հայաստան էին ներթափանցել նաև հելլենական պանթեոնի աստվածները, որոնք խառնվելով տեղական պանթեոնի հետ. տվել էին այնպիսի սինկրետիկ աստվածություններ, ինչպես Զևս-Արամազդը, Հերակլես-Վահագնը, Արև-Ապոլոն-Տիրը, Լուսին-Արտեմիս-Անահիտը, Ափրո-

---

[38] Plut., Luc., նույն տեղում, Strab., XI, 5, 1, XIII, 1, 55, XVI, 4, 16. Plin., Nat. hist., XXXIV, 16. Memn., LV.

[39] Տես Fragmenta historicorum graecorum, ed. C. Müller, 1849, էջ 204։

40 Հայաստանի տերիտորիայում, ինչպես հայտնի է, հին շրջանին վերաբերող վավերագրեր դեռևս չեն գտնված (չհաշված հատուկենտ փիմագիր արձանագրությունները)։ Տվյալ դեպքում նկատի ունենք պարթևական Ավրոմանում՝ Հայաստանին սահմանամերձ վայրում գտնված Տիգրանին ժամանակակից ու նրա անուներ հիշատակող մագաղաթյա վավերագրերը, որոնք ենթադրել են տալիս, թե Հայաստանում ևս գործարքների լեզուն այդ ժամանակ կարող էր հունարենը լինել (E. H. Minns, Parchments of the Parthian Period from Avroman in Kurdistan, „The Journal of Hellenic studies", vol. XXXV, Part 1, 1915, էջ 28—29։

գիտե-Աստղիկը և այլն։ Բառացիորեն նույնը մ. թ. ա. 1-ին դարի 60—50-ական թվականներին մենք հանդիպում ենք Հայաստանի հարևան Կոմագենե երկրում, որտեղ ևս պաշտվում էին Զևս-Օրոմ։սդզը, Ապոլոն-Միհր-Արև-Հերմեսը, Արտագնես (Վահագն)-Հերակլես-Արևսը և այլն։ Սա ընդհանուր երևույթ էր հելլենիստական արևելքի համար[41]։ Բայց այս աստվածները տիրող դասակարգինն էին։ Ժողովուրդն ապրում էր կրոնական իր հնամենի պատկերացումներով։

Մենք լավատեղյակ չենք այս շրջանի հայկական նյութական կուլտուրային, բայց անկասկած է, որ, ասենք, ճարտարապետության մեջ հելլենիզմի ազդեցությունը նույնքան շեշտված պիտի հանդես գար, և Տիգրանակերտի թատրոնի շենքը, օրինակ, կերտված պիտի լիներ նույն ոճով, ինչ որ Անտիոքի, Ապամեայի, Տարսոնի կամ հելլենիստական այլ քաղաքների թատրոնների շենքերը։ Այս եզրակացությանն է բերում մեզ հաջորդ դարում կերտված Գառնիի հեթանոսական տաճարի ցայտուն օրինակը։

Սրա հետ մեկտեղ Հայաստանում, անտարակույս, զարգանում և հասունանում էր նաև մի այլ մշակույթ, որն արտացոլվել է ժողովրդական ճարտարապետության դեռևս չպեղված հուշարձաններում, ինչպես և, օրինակ, Մովսես Խորենացու մոտ պահպանված առասպելներում, վիպական երգերում և զրույցներում։ Այս մշակույթի ակունքներն ու սոցիալական ընդգրկումը բոլորովին այլ էին։ Այն դալիս էր դարերի խորքից, պատկանում աշխատավոր ժողովրդին, և նրա հիմքի վրա էր, որ նախապատրաստվեց հայկական ազգային մշակույթի, հատկապես մատենագրության ու ճարտարապետության, հետագայում, 5-րդ դարում, սկսված զարմանալի վերելքը։ Այդ մշակույթի կարևորագույն բաղկացուցիչ մասն էր և ինքը՝ հայոց լեզուն։

Սակայն հելլենիստական աշխարհի հետ սերտ շփման արդյունքները չէին սպառվում միայն բարձր դասին վերաբերող մշակութային երևույթների և հունարենի ներթափանցմամբ։ Դրանք դրսևորվեցին բուռն տեղաշարժեր ապրող հայ հասարակության նաև տնտեսական կյանքի ասպարեզում, ավելի մեծ թափ հաղորդելով նրա զարգացմանը։ Շեշտակի աճում էր ստրկատիրությունը և ընդլայնվում ստրկական ուժի կիրառման ոլորտը։ Քաղաքների և առևտրի ծավալումը, դրամական տնտեսության զարգացումը զորեղ հարվածներ էին հասցնում գյուղական համայնքի ներքին հավասարակշռությանը և ինքնամփոփությանը, ուժեղանում էր նաև նրա շահագործումը պետության ու իշխող դասակարգի այլևայլ ներկայացուցիչների կողմից։ Սրվում էր անտագոնիզմը քաղաքի և գյուղի միջև։ Դասակարգային հասարակության ոլորտն էին ընդգրկվում նորանոր տերիտորիաներ։

Հելլենիստական շրջանին հատուկ համահարթման այս պրոցեսները, որոնց ասպարեզ էր դարձել ամբողջ Առաջավոր Ասիան դեռևս երկու դար առաջ, Հայաստանի տնտեսական ու կուլտուրական վերելքի կարևոր ազդակ հանդիսացան։ Զինված իր բոլոր նվաճումներով, Հայաստանը Տիգրան Բ-ի օրոք թևա-

41 Հայկական աղբյուրները (Մ. Խորենացի, Փավստոս Բուզանդ, Ագաթանգեղոս) հնարավորություն են տալիս բացահայտելու հին Հայաստանում տարածում գտած այդ երևույթը, ավելի ցցուն կերպով այն դրսևորվում է Հայաստանի հարևան Կոմագենեի հուշարձանների և արձանագրությունների մեջ (տես K. Humann und O. Puchstein, Reisen in Kleinasien und Nordsyrien, Textband, Berlin, 1890, էջ 230 և հետ.

կոխեց կարգացման մի նոր փուլի մեջ, որի բնորոշ դիծն էր, համեմատած նախորդ շրջանի հետ, նրա քաղաքական ազդեցության տարածումը հարևան երկրների վրա, որը հետագա դարերի ընթացքում վերափոխվեց քաղաքակրթական ազդեցության։

Ժողովրդական ավանդությունը Տիգրան Բ-ի մասին։ Տիգրանի դարը բաժանված է հայ պատմագրության սկզբնավորման ժամանակից հինգ հարյուրամյակներով։ Հասկանալի է, որ մեր պատմիչները չէին կարող տալ նրա մասին այնպիսի տեղեկություններ, որոնք ի վիճակի լինեին մրցելու Տիգրանին ժամանակակից անտիկ պատմագրության տվյալների հետ։ Սակայն ժողովրդի հիշողությունից այդ կարկառուն գործիչը չի ջնջվել։ Նրա մասին պահպանվել է բանավոր ավանդություն, երգվել են երգեր, ու սրանց հետքերը հասել են մեզ Մովսես Խորենացու «Հայոց պատմության» էջերում[42]։ Ահա մի երկու հատված այդ ավանդությունից. «...Սա (Տիգրանը) մեր թագավորներից հզորագույնը և խոհեմագույնն էր և նրանցից ու բոլոր մարդկանցից քաջ։ Նա էր, որ[43]... մարաց իշխանությանը վերջ տալով ու հույներին նվաճելով ոչ սակավ ժամանակով իրեն հնազանդեցրեց։ Եվ մեր սահմաններն ընդարձակելով՝ բնակության հին եզերքներին հասցրեց. իր ժամանակակիցներին նախանձելի էր նա, հետագա սերունդներին՝ ցանկալի ինքը և իր ժամանակը»։ «...Կանգնելով արանց գլուխ և քաջություն ցուցարերելով, մեր ազգը բարձրացրեց, լծի տակ եղածներիս՝ շատերի վրա լծադիր և հարկապահանջ դարձրեց. բոլոր տղամարդկանց ու կանանց համար առատացրեց ոսկյա և արծաթյա զարդերը, պես-պես գույների պատվական քարերը և զգեստները, որոնցով տգեղները գեղեցիկ էին երևում, իսկ գեղեցիկները իրենց ժամանակի դյուցազուններն էին դառնում։ Հետևակը ձիերի վրա նստեց, պարսավորները դարձան դիպուկ աղեղնավորներ, գուրզ կրողները զինվեցին սրերով ու նիզակներով, մերկերը ծածկվեցին վահաններով ու զրահներով։ Թշնամուն հալածելու համար բավական էր ի մի հավաքված այդ զորքի տեսքը միայն, նրա զենք ու զրահի փայլը և շողշողալը։ Խաղաղություն ու շենություն բերող, բոլոր հասակի մարդկանց յուղ ու մեղրով սնող (էր նա)»։

Այս նկարագրում կա, իհարկե, անձի իդեալականացում, որն անխուսափելի է ժողովրդական ստեղծագործության մեջ։ Մյուս կողմից այն զրկված է սոցիալական գծերից՝ Տիգրանը պատկերված է որպես դասակարգերից վեր կանգնած մի անձնավորություն, որի գործունեությունը հավասարապես ուղղված էր սոցիալական բոլոր շերտերի կարիքների ու ձգտումների բավարարմանը, այնինչ իրականում նա հողատեր-ստրկատերերի իշխող դասակարգի ներկայացուցիչն էր ու նրա մասին էր հոգում։ Բայց չէ՞ որ այլ վիճակում սույն նկարագիրը չէր կարող դուրս գալ վաղ միջնադարյան պատմիչ Մովսես Խորենացու գրչի տակից։

---

42 Մովսես Խորենացի, I, ԻԴ—Է։ Այդ ավանդության տվյալները պատմագիրը սխալմամբ վերագրել է մի այլ Տիգրանի, որը ապրած պիտի լինի մ. թ. ա. VI դարում, իսկ Տիգրան Բ-ի մասին պատմել է գրեթե միայն այն կցկտուր տեղեկությունները, որոնք նա ստացել է անտիկ պատմագրության ներկայացուցիչներից մեկից՝ Հովսեփոս Փլավիոսից, և որոնցով չատ թյուր պատկերացում է ստացվում Տիգրանի գործունեության մասին (տե՛ս Մ. Արևոյան. Հայ ժողովրդական առասպելները, Էջմիածին, 1901, էջ 447 և հտ.)։

43 Մ. Աբեղյանը (Նշվ. աշխ., էջ 463) ցույց է տալիս, որ տեքստի այս տեղում պարսից թագավոր Կյուրոսի հիշատակությունը նախորդ ծանոթության մեջ նշված թյուրիմացության արդյունք է։

Այս բոլորով հանդերձ նկարագրության մեջ մենք ճանաչում ենք Տիգրանին ու նրա գործունեությունը, մանավանդ այնպիսի մանրամասներում, որպիսիք են մարերին (այսինքն մեդացիներին ու պարթևներին) և հույներին (այսինքն Սելևկյան պետությունը) նվաճելու, երկրի սահմանների ընդարձակման, ձեռք բերված հարստությունների, զորքի հզորության մասին պատմածները։

Խորենացու մոտ պահպանվել են նաև ժողովրդի հիշողությունները Տիգրանի կատարած գերեվարությունների և վերաբնակեցումների մասին. պատմվում է մարերի մեծ զանգվածների բնակեցման մասին Արաքսի միջին հոսանքում՝ Նախճավանի շրջակայքում (Խորենացի, I, լ)։ Փավստոս Բուզանդը պահպանել է էլ ավելի հստակ տեղեկություններ. նա պատմում է բազմահազար հրեական բնակչության մասին, որը «բնակեցրեց հայոց քաղաքներում մեծ արքա Տիգրանը իր դարում և իր ժամանակ» (Փավստոս Բուզանդ, IV, ԾԵ)։

Պահպանվել են նաև տեղեկություններ Տիգրանակերտի հիմնադրման մասին (Խորենացի, I, ԻԸ և հտ.)։ Այն պատմական փաստը, որ Տիգրանի երկու դուստրերը ամուսնացած են եղել մեկը մարերի, մյուսը՝ պարթևների թագավորների հետ, իր արտացոլումն է գտել Տիգրանի քրոջ՝ Տիգրանուհու[44] պատմության մեջ, ըստ որի նրա ամուսինը, մարաց թագավորը, փորձել է նրա միջոցով դավեր նյութել Տիգրանի դեմ, բայց Տիգրանուհուն հաջողվել է կանխել վտանգը։

Պահպանված այս փշուրները, իհարկե, Տիգրանի մասին մի ժամանակ երգվածի ու պատմվածի մի չնչին մասն են կազմել։

ДЕРЖАВА ТИГРАНА ВТОРОГО

Г. Х. САРКИСЯН

(Резюме)

В первой трети I в. до н. э., при царе Тигране II, армянское рабовладельческое государство встало на путь внешних завоеваний и создало огромную державу, простиравшуюся от границ Египта до Каспийского моря и от Месопотамии до бассейна Куры и превосходившую собственно Великую Армению по территории втрое.

Новосозданное государство было типичным образцом «мировых» держав древневосточного и эллинистического периодов — малоустойчивым политическим объединением экономически, этнически и культурно разнородных элементов. Наряду с обществами, сравнительно недавно вступившими на путь классового развития, в его состав вошли остатки державы Селевкидов — Сирия с Финикией, Киликия, Северная Месопотамия, изобиловавшие крупными и высокоразвитыми эллинистическими полисами.

---

44 Ըստ հայկական սովորության, Տիգրանուհի անունը կսազեր Տիգրանի դստերը և ոչ քրոջը. թերևս սկզբնական տարբերակում նա հենց դուստրն է եղել, պատմական իրականությանը համապատասխան (հմմտ. Մ. Արեղյան, Հայ ժողովրդական առասպելները էջ 471)։

По свидетельству античных авторов (Юстин, Аппиан и др.) и по нумизматическим данным, Тигран II создал для сирийских городов благоприятные условия жизни, даровав им ряд таких прав и привилегий, которыми те не пользовались при Селевкидах, и обезопасив торговые пути. Тем самым он завоевал поддержку крупных землевладельцев, купцов и владельцев ремесленных мастерских Антиохии, Лаодикеи, Берита и других городов.

Оказавшись ядром огромной державы, Армения окрепла экономически. Усилился класс землевладельцев-рабовладельцев, зацвело рабовладельческое хозяйство за счет притока дешевой рабочей силы из покоренных стран. Вследствие усиления эксплуатации обострился классовый антагонизм внутри армянского общества. Глубже проникло влияние эллинистических культурных и прочих традиций в Армению, живыми носителями которых оказались сотни тысяч жителей эллинистических полисов Киликии и Каппадокии, насильно переселенных в армянские города. Был основан ряд новых городов, в том числе столица новосозданной державы — Тигранакерт.

Античная историография сохранила подробные сведения об этом периоде истории Армении. Кроме того, на страницах «Истории Армении» Мовсеса Хоренаци до нас дошли эпические народные песни о Тигране II